

## Բ Ո Ւ Գ Դ Հ Ա

(Մերեծկովսկիի)

Մութ ձորերի մէջ, սարերի գլխին,  
Ու աւան քամին փրչում էր ուժգին,  
Մի խումբ օրջմոյիկ, թախիծը սրտում,  
Դէպի Գանգէսը զընում էր սրտում:  
Բու ու անձրեւից՝ կիսամերկ, նիհար  
Նրանց մարմինը կապտել էր իսպառ,  
Եւ օրջում էին ահա՛ երեք օր,  
Առանց ապաստան, ընկած սար ու ձոր:

Ծառերի միջից անթափանց մթնում,  
Նրանց աչքերին յանկարծ մի շրթնո՛ւ,  
Տահար է փայլում, ուր ներս են մտնում,  
Որ զսնեն իրանց ապաստան այնտեղ:  
Եւ ի՛նչ են տեսնում. իր գանի վրայ  
Բազմած է Բուդդհան—մի փառէ հսկայ,  
Որի ոսկեկուռ, պերճաւոր թագին  
Շողոռոյում էր մի գոհար թանկագին:

«Այսեղ մարդ չը կայ, գիշերն էլ խաւար»,  
Նրանցից մէկը ասում էր կամաց.—  
«Եղբայր, այս անգին գոհարի համար  
Մեզ մեծ գումարներ կը տան անկասկած:  
Նա ամենեւին պէտք չէ Ասրժուն,  
Այնտեղ, կապուսակ տարածութեան մէջ—  
Երկնային Հօր մօտ—աւելի սիրուն,  
Նրբեղ են փայլում աստղերը անշեջ»:

Նրեանք տուին... Եւ անա՛ կամաց  
 Նրեանք մութի մէջ, երկիւղով լցուած,  
 Լուռ մօտենում են. բայց երբ դողալով  
 Ուզում են ձեռք տալ այդ վեհ սրբութեան՝  
 Լսում են ձայներ անեղ որոտման,  
 Որ սարերի մէջ արձագանք տալով՝  
 Մի ուժեղ քափով նրանց յետ է մղում...  
 Եւ սարսափանքից սառչում են տեղում...

Այդ խմբի մէջից մէկը միայն անվախ  
 Առաջ է գալիս եւ, վստահ, խաղաղ,  
 Դիմում Աստծուն. «Դո՛ւ անարդար ես,  
 Կամ եւ փութերը մեզ տու ես ասել,  
 Թէ դու ողորմած, բարի ես եւ հեզ,  
 Թէ դու սիրում ես վշտեր ամոքել  
 Եւ յաղթել խաւարն, որպէս լոյս արեւ...  
 Ո՛չ, դու մեզանից մի փառի համար  
 Վրէժ ես առնում, միևնչեռն եւ առջեւ  
 Մենք գետնասարած, ընկած ենք անհար:

Բայց մենք էլ մեզ պէս անմահ ենք հոգով.  
 Օ՛, ամաչիր դո՛ւ, թագաւոր երկնի.  
 Դու վեր ես կացել եւ հրգօր ոյծով  
 Աղփաքի հացը խրում ես բռնի:  
 Աւբաների մեծ, թո՛ղ խելագարիս  
 Գլխին որոտան ճանք ու կայծակներ.  
 Քեզ հետ հաւասար կանգնած եմ անա,  
 Եւ գլուխս բարձր պահած անվեհեր՝  
 Գոչում եմ երկրի եւ երկնի դիմաց—  
 Դու անարդար ես, ո՛վ կարող աստուած»:  
 Նա լռեց... Իսկոյն հրաշք պատահեց.  
 Բողոքի քաղաքի գլուխը խոնարհեց  
 Մինչեւ ի գետին: Եւ խեղճուկ, սոված  
 Ամբոխի առաջ այն հրգօր եւ մեծ  
 Քարէ հսկան էր փռու մէջ ընկած...